Ներկայացվել է
«Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի
խորհրդի 2019 թվականի մարտի 22-ի նիստին (11-րդ նիստ)

2018թ.-ի ԸՆԹԱՑՔՈՒՄ «ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ.-ի ընթացքում (2018թ. հունվարի 1 – 2018թ. դեկտեմբերի 31) «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Հիմնադրամ) կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

I. 2018թ.-ի ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

1.1. Հիմնադրամի կողմից օրենքով սահմանված կարգով **2017թ.-ի հունվարի մեկից հետո** տեղի ունեցած դեպքերի մասով կատարվել են հատուցումներ թվով **26 դեպքերի մասով**, որոնցից 19-ը՝ զոհված զինծառայողների ընտանիքներին, 7-ը՝ հաշմանդամություն ունեցող զինծառայողների:

Զոհված 19 զինծառայողներից՝

- 3-ը՝ սպայական կազմի զինծառայողներ են, որոնցից յուրաքանչյուրին հասանելիք հատուցման գումարը կազմում է 82 մլն. ՀՀ դրամ:
- 16-ը՝ պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողներ են, որոնցից յուրաքանչյուրին հասանելիք հատուցման գումարը կազմում է 58 մլն. ՀՀ դրամ,

Հաշմանդամություն ունեցող 7 զինծառայողներից՝

- 2-ը՝ I խմբի հաշմանդամություն ունեցող պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողներ են, որոնց հասանելիք հատուցման գումարը կազմում է 58 մլն. ՀՀ դրամ,
- 5-ը՝ II խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողներ, որոնցից 3-ը պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողներ, 1-ը սպայական կազմի զինծառայող և 1-ը պայմանագրային զինվորական ծառայության ենթասպայական կազմի զինծառայող, որոնց հասանելիք գումարը կազմում է համապատասխանաբար 29 մլն. և 53 մլն. և 41 մլն. ՀՀ դրամ:

1.2. **2015-2016թթ.-ին** տեղի ունեցած դեպքերի մասով 2018թ.-ին կատարվել են հատուցումներ թվով **163 դեպքերի մասով**, որոնցից 142-ը՝ զոհված զինծառայողների ընտանիքների, 21-ը՝ հաշմանդամություն ունեցող զինծառայողների:

Զոհված 142 զինծառայողներից՝

- 20-ը՝ սպայական կազմի զինծառայողներ են, որոնց հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է 300,000 ՀՀ դրամի և պետական աջակցության գումարի դրական տարբերությունը *(առավելագույնը՝ 270,000, նվազագույն՝ 15,136 դրամ),*
- 13-ը՝ Տարածքային պաշտպանությանը ներգրաված կամ կամավորագրված անձիք են, որոնց հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է 250,000 ՀՀ դրամի և պետական աջակցության գումարի դրական տարբերությունը *(առավելագույնը՝ 220,000, նվազագույն՝ 81,280 դրամ),*
- 26-ը՝ պայմանագրային զինվորական ծառայության ենթասպայական կամ շարքային կազմի զինծառայողներ են, որոնց հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է 250,000 ՀՀ դրամի և պետական աջակցության գումարի դրական տարբերությունը, որոնցից մեկին նաև տրամադրվում է լրացուցիչ 100,000 ՀՀ դրամ՝ երեք անչափահաս երեխա ունենալու համար *(առավելագույնը՝ 220,000, նվազագույն՝ 1,600 դրամ)*,
- 73-ը՝ պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական կամ շարքային զինծառայողներ են, որոնց հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է 200,000 ՀՀ դրամի և պետական աջակցության գումարի դրական տարբերությունը *(առավելագույնը՝ 170,000, նվազագույն՝ 20,000 դրամ),*
- 10-ը, որոնցից 5-ը՝ սպայական կազմի և 5-ը պայմանագրային ծառայության ենթասպայական կազմի զինծառայողներ են, որոնց հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է լրացուցիչ ամսական 100,000 ՀՀ դրամ, քանզի վերջիններս ունեն 3 կամ ավելի անչափահաս զավակ (պետական աջակցության և հատուցման գումարի միջև տարբերությունը բացասական է):

Հաշմանդամություն ունեցող 21 զինծառայողներից՝

- 8-ը՝ I խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողներ են, որոնցից 7-ը պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողներ և 1-ը պայմանագրային զինվորական ծառայության ենթասպայական կազմի զինծառայող, վերջիններիս հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է 200,000 ՀՀ դրամի և պետական աջակցության գումարի դրական տարբերությունը *(առավելագույնը՝ 150,000, նվազագույնը՝ 109,000 ՀՀ դրամ),*
- 13-ը՝ II խմբի հաշմանդամություն ունեցող, որոնցից 1-ը սպայական կազմի, 7-ը պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի և 5-ը պայմանագրային զինվորական ծառայության ենթասպայական կազմի զինծառայողներ են, որոնց հասանելիք ամսական հատուցման գումարը կազմում է համապատասխանաբար 200,000, 100,000 և 150,000 ՀՀ դրամի և պետական աջակցության գումարի դրական տարբերությունը *(առավելագույնը՝ 97,136 դրամ, նվազագույնը՝ 26,000 ՀՀ դրամ):*

1.3. Նախորդ հաշվետվությունից մինչ օրս Հիմնադրամի կողմից կատարվել է հատուցում մինչև հաշմանդամության կարգը ստանալը.

- Մեկ պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողի՝ 100,000 ՀՀ դրամ ամսական հատուցման չափով, որը կշարունակվի կատարվել առավելագույնը 6 ամիս:

1.4. Դադարեցվել է թվով 3 զինծառայողի վճարվող հատուցումները.

- 1-ը զինծառայողի հաշմանդամության կարգը կորցնելու հետևանքով,
- 2-ը միակ շահառուի մահվան հետևանքով:

2018թ.-ի ընթացքում Հիմնադրամը տրամադրել է հատուցումներ 2017 և 2018թթ.-ի ընթացքում շահառու դարձած 226 զինծառայողներ դեպքերի մասով, որոնցից 189 դեպքերով մասով շահառուները ճանաչվել են 2018թ.-ի ընթացքում:

1.5. 2018.-ի ընթացքում Հիմնադրամը հատուցումներ է տրամադրում 226 դեպքի մասով, *որոնցից 188-ը զոհված* զինծառայողների ընտանիքների և 38-ը հաշմանդամություն ունեցող զինծառայողների *(աղյուսակ 1՝ տոկոսային հարաբերակցություն):*



1.6. 226 դեպքերի մասով հատուցումներ են տրամադրվել 2017թ.-ից հետո 63, 2015թ.-ին 41, 2016թ.-ին 122 դեպքերի մասով (աղյուսակ 2՝ տոկոսային հարաբերակցություն) :



II. 2017-2018թթ.-ի ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ

	1.Պայմանագրային կամ պարտադիր զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրաված սպայական կազմի զինծառայողին		2. Պայմանագրային զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրաված ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողին կամ տարածքային պաշտպանությանը ներգրաված կամ կամավորագրված անձին		3.Պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողին		Ընդամենը	
	դեպքերի քանակ	վճարված հատուցման մեծությունը	դեպքերի քանակ	վճարված հատուցման մեծությունը	դեպքերի քանակ	վճարված հատուցման մեծությունը	դեպքերի քանակ	վճարված հատուցման մեծությունը
Զոհվելու (մահանալու) կամ անհայտ բացակայող ճանաչելու դեպքում	34	155,448,128	47	82,826,184	107	486,209,000	***188***	***724,483,312***
Առողջությանը պատճառված վնասի հետևանքով (I խմբի հաշմանդամություն)	-	-	2	15,916,992	12	71,578,000	***14***	**87,494,992**
Առողջությանը պատճառված վնասի հետևանքով (II խմբի հաշմանդամություն)	*3*	22,600,000	*9*	*27,971,904*	*12*	*32,192,000*	***24***	***82,763,904***
Մինչև հաշմանդամության կարգը ստանալը տրամադրվող հատուցում	-	-	-	-	1	600,000	**1**	**600,000**
Ընդամենը	**37**	**178,048,128**	**58**	**126,715,080**	**132**	**590,579,000**	***227***	***895,342,208***

III. ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2018Թ.-ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

4.1. Պարտավորությունները 2018թ.-ի ընթացքում շահառուների մասով

	Որոշման պահից 20 տարվա կտրվածքով ստանձնած ամսական անուիտետային պարտավորություններ	Հատուցման ենթակա գումար մոտակա (20-t) տարիների ընթացքում
Զոհված	6,026,585,344	5,862,359,907
1-ին կարգի հաշմանդամ	315,799,680	305,602,520
2-րդ կարգի հաշմանդամ	304,047,260	294,741,935
Ընդհանուր	**6,646,432,284**	**6,462,704,362**

4.2. Պարտավորությունները Հիմնադրամի բոլոր շահառուների մասով

	Որոշման պահից 20 տարվա կտրվածքով ստանձնած ամսական անուիտետային պարտավորություններ	Հատուցման ենթակա գումար մոտակա (20-t) տարիների ընթացքում
Զոհված	7,706,585,344	7,413,459,907
1-ին կարգի հաշմանդամ	519,799,680	492,802,520
2-րդ կարգի հաշմանդամ	568,047,260	543,441,935
Ընդհանուր	**8,794,432,284**	**8,449,704,362**

IV. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԵՐ – 2018թ.

	Գումար	Տոկոս
Հատուցումներ	429,263,580	
Կառավարումից ստացված եկամուտ	797,126,000	
Պարտադիր վճարներ	7,390,093,000	
Նվիրաբերություններ	94,839,000	100%
Բանկային փոխանցմամբ	89,675,744	*95%*
Կայքի միջոցով	5,163,256	*5%*

V. Հիմնական ֆինանասական ցուցանիշների աճ 2017-2018թթ.-ի համար

Նվիրաբերությունների աճ

Պարտադիր վճարների աճ

Կառավարումից ստացված եկամուտների աճ



Կատարված հատուցումների աճ



VI. ԿԱՏԱՐՎՈՂ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ





VII. ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ՝ ԸՍՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵԿ-ԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ՝ 2018թ.-ի ՀԱՄԱՐ

1. Հայաստանի Հանրապետությունից ստացված դրոշմանիշային վճարներ (12 ամիս)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Վճարող կազմակերպություններ	31,634	31,678	31,173	31,618	31,201	29,357	32,231	31,985	31,235	30,510	29,921	28,332
Վճարողների քանակ	484,997	493,483	491,198	502,032	493,968	447,045	527,019	522,688	512,017	498,831	495,383	471,123
Վճարված գումար	484,997,000	493,483,000	491,198,000	502,032,000	493,968,000	447,045,000	527,019,000	522,688,000	512,017,000	498,831,000	495,383,000	471,123,000

2. Արցախի Հանրապետությունից ստացված դրոշմանիշային վճարներ (12 ամիս)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Վճարող կազմակերպություններ	2,483	2,462	2,443	2,427	2,419	2,400	2,360	2,326	2,311	2,254	2,217	2,094
Վճարողների քանակ	36,271	36,711	36,880	36,762	36,771	36,414	36,013	35,357	36,174	36,197	36,262	35,991
Վճարված գումար	36,271,000.2	36,711,000	36,880,000	36,762,000	36,771,000	36,414,000	36,013,000	35,357,000	36,174,000	36,197,000	36,262,000.	35,991,000

II. ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԱՃԸ (ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ 10-ՐԴ ՆԻՍՏԻՑ ՀԵՏՈ)

		2018թ. Նիստ	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
Հավաքագրված գումար	ՀՀ	10-րդ	475,546,000	483,528,000	480,216,000	490,238,000	481,104,000	431,049,000	507,192,000	495,560,000	465,987,000	404,523,000	34,746,000	0
		11-րդ	484,997,000	493,483,000	491,198,000	502,032,000	493,968,000	447,045,000	527,019,000	522,688,000	512,017,000	498,831,000	495,383,000	471,123,000
	Արցախ	10-րդ	35,576,000	36,022,000	36,196,000	36,055,000	36,035,000	35,591,000	35,114,000	34,071,000	33,820,000	30,585,000	2,266,000	0
		11-րդ	36,271,000	36,711,000	36,880,000	36,762,000	36,771,000	36,414,000	36,013,000	35,357,000	36,174,000	36,197,000	36,262,000	35,991,000

ԱՏ	ՀՀ	Տոկոսային	1.95%	2.02%	2.24%	2.35%	2.60%	3.58%	3.76%	5.19%	8.99%	18.91%	92.99%	100.00%
		Գումարային	9,451,000	9,955,000	10,982,000	11,794,000	12,864,000	15,996,000	19,827,000	27,128,000	46,030,000	94,308,000	460,637,000	471,123,000
	Արցախ	Տոկոսային	1.95%	1.91%	1.89%	1.96%	2.04%	2.26%	2.50%	3.64%	6.51%	15.50%	93.75%	100.00%
		Գումարային	695,000	689,000	684,000	707,000	736,000	823,000	899,000	1,286,000	2,354,000	5,612,000	33,996,000	35,991,000

III. 2017 և 2018թթ.-ի տարեկան ամփոփիչ նիստերին ներկայացված հաշվետվություններում արտացոլված՝ ՀՀ-ից ստացված դրոշմանիշային վճարներ

Նիստ	Տարի	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
5-րդ	**2017**	488,032,000	491,531,000	501,204,000	503,476,000	508,179,000	507,115,000	502,291,000	492,016,000	496,208,000	492,447,000	482,996,000	446,614,000
11-րդ	**2018**	484,997,000	493,483,000	491,198,000	502,032,000	493,968,000	447,045,000	527,019,000	522,688,000	512,017,000	498,831,000	495,383,000	471,123,000
ԱՏ	Տոկոսային	**-0.63%**	**0.40%**	**-2.04%**	**-0.29%**	**-2.88%**	**-13.44%**	**4.69%**	**5.87%**	**3.09%**	**1.28%**	**2.50%**	**5.20%**
	Գումարային	**-3,035,000**	**1,952,000**	**-10,006,000**	**-1,444,000**	**-14,211,000**	**-60,070,000**	**24,728,000**	**30,672,000**	**15,809,000**	**6,384,000**	**12,387,000**	**24,509,000**


2017 և 2018թթ.-ի ամփոփիչ նիստերին ներկայացված ցուցանիշների հարաբերակցություն (ՀՀ)
540,000,000
520,000,000
500,000,000
480,000,000
460,000,000
440,000,000
420,000,000
400,000,000
Հունվար
Փետրվար
Մարտ
Ապրիլ
Մայիս
Հունիս
Հուլիս
Օգոստոս
Սեպտեմբեր
Հոկտեմբեր
Նոյեմբեր
Դեկտեմբեր
2017
2018

VIII. 2018թ.-ի ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ



IX. ՎԵՐԱԴԱՐՁԵՐ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածների՝ 2019թ.-ի հունվարի 1-ից ապրիլի 30-ը Հիմնադրամը կազմակերպեց վճարված դրոշմանիշային վճարների վերադարձ՝

ա) ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների ծնողներին, ամուսիններին և (կամ) զավակներին,

բ) զոհված (մահացած) զինծառայողների ծնողներին, ամուսիններին և (կամ) զավակներին,

գ) մեկից ավելի հիմքով դրոշմանիշային վճար վճարած (իրենց եկամուտներից հարկային գործակալի կողմից պահված) անձանց

Գործընթացի վերջնաժամկետն է սույն թվականի ապրիլի 30-ը: Հիմնադրամը մարտի 20-ի դրությամբ ստացել է 6510 դիմումներ: Հիմնադրամը շարունակում է ստանալ նաև դիմումներ անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից, որոնք օրենքի համաձայն իրավունք ունեն դիմել Հիմնադրամ վճարված դրոշմանիշերին վճարների վերադարձման համար մինչև սույն թվականի ապրիլի 30-ը:

Ստացված 6510 դիմումներից Հիմնադրամն ուսումնասիրել է 6461-ը, որոնցից 6244-ը բավարարվել են և վերադարձման ենթական գումարները փոխանցվել են դիմորդներին: Մնացած 214 դիմումները կասեցված են, ինչի կապակցությամբ Հիմնադրամի աշխատակիցները կապ են հաստատում դիմորդների հետ՝ թերությունները վերացնելու նպատակով: Մերժվել է 3 դիմում:

	Դիմումների քանակ 2018թ.	***Դիմումների քանակ 2017թ.***
Ընդհանուր	***6461***	***3150***
1-ից ավելի հիմքով դրոշմանիշային վճար վճարած անձանց	4086	*2527*
ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների ծնողներին, ամուսիններին և (կամ) զավակներին	1088	*514*
զոհված (մահացած) զինծառայողների ծնողներին, ամուսիններին և (կամ) զավակներին	1287	*109*

2018թ.-ին ներկայացված դիմումների ընդհանուր թիվը գերազանցում է 2017թ.-ին ներկայացված դիմումների թվին շուրջ 61%-ով:

2017 և 2018 թթ.-ին ներակացված դիմումների հարաբերակցություն



2018թ.-ին ներկայացված դիմումների տոկոսային հարաբերակցություն



2017թ.-ին ներկայացվաշ դիմումների տոկոսային հարաբերակցություն



2019թ.-ին www.1000plus.am կայքում ստեղծվել է էլեկտրոնային դիմումների ներկայացման հնարավորություն, որի միջոցով Հիմնադրամին դիմել են 3,509 դիմումատումներ: Էլեկտրոնային դիմումները կազմում են դիմումների 54%-ը: